


ՄԵՂՐԻԻ ՓՈՔՐ ԹԱՂԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ  
ԵՆԹԱԾՐԱԳՐԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ  
/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

Ձեռնարկող՝

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ



ԵՐԵՎԱՆ, 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>6</b>
1.1. Տեղեկատվություն ներկայացվող գործունեության վերաբերյալ .....	6
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը .....	6
1.3. Նախատեսվող գործունեության նորմատիվ իրավական հիմքը .....	7
<b>2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ .....</b>	<b>9</b>
2.1. Աշխարհագրական դիրքը, ռեյինֆը և կլիման .....	9
2.2. Երկրաբանություն .....	14
2.3. Սեյսմիկ բնութագիր .....	14
2.4. Օդային ավազան .....	14
2.5. Աղմուկ և թռթռումներ .....	19
2.6. Ջրային ռեսուրսներ .....	19
2.7. Հողեր .....	22
2.8. Կենսաբազմազանություն .....	23
2.8.1. Բուսական աշխարհ .....	23
2.8.2. Կենդանական աշխարհ .....	24
2.8.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....	26
2.8.4. Բնության հուշարձաններ .....	28
2.9. Հնագիտական, պատմական և մշակութային հուշարձաններ .....	29
2.10. Սոցիալ-տնտեսական պայմաններ .....	30
<b>3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....</b>	<b>31</b>
3.1. ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ .....	35
3.2. Երթևեկության անվտանգության կազմակերպում .....	37
3.3. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ .....	37
<b>4. ԾՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՎՆԿԱՎՈՂ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>38</b>
4.1. Ծինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվող ազդեցություններ .....	38
4.1.1. Օդային ավազանի աղտոտվածություն .....	38
4.1.2. Աղմուկ և թռթռումներ: .....	39
4.1.3. Ջրօգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցություններ .....	39
4.1.4. Թափոնների առաջացում .....	40
4.1.5. Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա .....	41
4.1.6. Մշակութային ժառանգություն .....	41
4.1.7. Սոցիալական ազդեցություններ .....	41
4.1.8. Ծինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ: .....	42
4.1.9. Արտակարգ իրավիճակներ .....	42

4.2.	Ազդեցություններ շահագործման փուլում .....	42
4.2.1.	Օդի որակ.....	42
4.2.2.	Աղմուկ.....	42
4.2.3.	Սոցիալ-տնտեսական հետևանքներ .....	42
<b>5.</b>	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՆԱՍԱԿԱՐ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....</b>	<b>43</b>
5.1.	Շինարարության փուլ.....	44
5.1.1.	Օդային ավազան .....	44
5.1.2.	Աղմուկ և թռթռումներ .....	45
5.1.3.	Ձրօգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցությունների կառավարում....	45
5.1.4.	Թափոնների կառավարում .....	45
5.1.5.	Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների կառավարում .....	46
5.1.6.	Մշակութային ժառանգություն վրա ազդեցությունների կառավարում.....	46
5.1.7.	Սոցիալական ազդեցությունների կառավարում.....	47
5.1.8.	Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների պահպանություն .....	48
5.1.9.	Արտակարգ իրավիճակների արագ հակազդման պլան .....	48
5.2.	Շահագործման փուլ.....	50
<b>6.</b>	<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>59</b>
<b>7.</b>	<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b>	<b>60</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1.</b>	<b>ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....</b>	<b>61</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2.</b>	<b>ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի օտարման ոչ ենթակա պատմության և մշակութային հուշարձանների ցանկ .....</b>	<b>65</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3.</b>	<b>Մեղրի քաղաքի Փոքր Թաղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ .....</b>	<b>68</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 4.</b>	<b>Շինարարական հրապարակի կազմակերպման հաատակագիծ.....</b>	<b>70</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 5.</b>	<b>Երթեկության կազմակերպման սխեմա.....</b>	<b>71</b>

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկող՝	«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ
1.2 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, Սարալանջի 1
1.3 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա 8
1.4 Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ՝	+374 91 43 04 16; Էլ փոստ info@haldi.am
1.5 Իրավաբանական անձի պետական գրանցման Վկայականի համարը	03Ա 081818
1.6 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՕՓ	Operational policy/ Գործառնական քաղաքականություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՀՄՆՀ	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԱԿ ԵՏՀ	Միացյալ ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՄԹԿ	Մահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՏԵԶ	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### 1.1. Տեղեկատվություն ներկայացվող գործունեության վերաբերյալ

Ներկայացվող գործունեության պատվիրատուն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն է: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ՀՄՆՀ) իրավահաջորդն է: ՀՄՆՀ-ն ստեղծվել է համաձայն ՀՀ Կառավարության 11.04.2000թ. № 162 որոշման՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքներում փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը և կենսամակարդակի բարելավմանը աջակցելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը կազմավորվել է Սոցիալական ներդրումների հիմնադրամի վերակազմավորման հիմքի վրա՝ «2014-2025թթ. Հայաստանի հեռանկարային զարգացման ծրագրի» տարածաշրջանային զարգացման քաղաքականության շրջանակներում:

### 1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Ներկայացվող գործունեությունը իրականացվում է Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման (ՏՏԵԶ) ծրագիր» շրջանակներում: Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից ստացել է ֆինանսավորում «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» (ՏՏԵԶ ծրագիր/Ծրագիր) իրականացման նպատակով: ՏՏԵԶ ծրագրի նպատակն է՝ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացումը: Ակնկալվում է, որ Ծրագրի իրականացման արդյունքում կշահեն, մասնավորապես՝ Հայաստանի տարբեր մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման բարելավման առումով: ՏՏԵԶ ծրագրի բաղադրիչներից մեկը վերաբերվում է հանրային ենթակառուցվածքի տրամադրմանը՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

«Մեղրիի Փոքր Թաղի զբոսաշրջային ենթակառուցվածքների վերականգնում» ենթածրագրի իրականացումը կնպաստի Փոքր Թաղի պատմամշակութային վայրի վերակենդանացմանը և բարելավմանը, հարմարավետ տրանսպորտային հաղորդակցության ապահովմանը, դրական ազդեցություն կունենա զբոսաշրջության

զարգացման վրա՝ կավելացնի զբոսաշրջիկների թիվը տարածաշրջանում, կստեղծվեն հավելյալ մշտական և ժամանակավոր աշխատատեղեր և տնտեսական օգուտներ: Ավելին՝ բարեկարգ փողոցները, մայրերը և ենթակառուցվածքները կամբողջացնեն Բզմիրյան հիմնադրամի կողմից իրականացվող «Մեղրի քաղաքի Փոքր Թաղի վերածնունդ» ծրագիրը, որի նպատակն է պահպանել և վերականգնել Մեղրի քաղաքի մշակութային ժառանգությունը: Մասնավորապես, նշված ծրագրի ընդհանուր նպատակն է 19-րդ և 20-րդ դարի սկզբին պատկանող ժողովրդագրական եզակի շինությունների վերականգնմամբ նոր թափ հաղորդել էթնոմշակութային հյուրընկալությանը, և տարածաշրջանը դարձնել էթնիկ հյուրընկալության կենսունակ կենտրոն:

### **1.3. Նախատեսվող գործունեության նորմատիվ իրավական հիմքը**

Նախատեսվող գործունեության նախագծման և շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանությանը, այդ օրենսդրությունից բխող ՀՀ կառավարության որոշումներով: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Հողային օրենսգիրք (02.05.2001թ.)
3. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.)
4. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (28.11.2011 թ.)
5. Թափոնների մասին ՀՀ օրենք (24.11.2004 թ.)
6. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք (07.02.2012թ.)
7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (01.11.1994թ.)
8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (21.06.2014թ.):
9. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին ՀՀ օրենք (11.11.1998 թ. ՀՕ 261):
10. ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին ՀՀ օրենք (11.04.2003թ.)
11. ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (15.03.2007թ. N 385-Ն, հավելված N 9),
12. ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (29.12.2005թ. N 2322-Ն),

13. ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշում “Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին”:
14. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Մանիտարակենցադային Մենքերի» N 2.2.8-003-12 Մանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
15. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրաման ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
16. ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին»:
17. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Մանիտարակենցադային Մենքերի» N 2.2.8-003-12 Մանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
18. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
19. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
20. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
21. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
22. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
23. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
24. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ, որոնք հասանելի են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կայքում՝ <http://www.env.am>: Դրանց շարքում է նաև ՄԱԿ-ի ԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին,



հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան (Օրհուս, 1998թ.):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում (2014թ.) փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացման դեպքում անհրաժեշտ է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման դրական պետական փորձաքննական եզրակացություն, որը տրվում է լիազոր մարմնի (ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ) կողմից: Նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունները պետք է գնահատվեն մինչև նախատեսվող գործունեության իրականացման փուլը:

Նշված գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հոդված 14, կետ 8-ի այն է՝ փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է **Բ կատեգորիայի** ընթացակարգով:

## **2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ**

### **2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը և կլիման**

Ուսումնասիրվող տարածքը տեղակայված է ՀՀ Սյունիքի մարզում: Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Մեղրի համայնքում առկա են լանդշաֆտային ուղղաձիգ 6 գոտիներ՝ նախալեռնային կիսանապատային, ցածր և միջին լեռնային հետանտառային, ցածր և միջին լեռնանտառային, միջին լեռնային մարգագետնատափաստանային, բարձր լեռնային

մերձալպյան և բարձր լեռնային ալպյան, որից գերակշռողն է ցածր և միջին լեռնանտառայինը:

Համայնքի տարածքով է անցնում «Երևան-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման» միջպետական ավտոխճուղին:

Մեղրիի գետավազանի հիմնական գետը Մեղրի գետն է, որի երկարությունը կազմում է 36 կմ, իսկ ջրհավաք ավազանի մակերեսը 336,3 կմ<sup>2</sup> է: Մեղրի գետի խոշոր վտակներն են Գոզգոզը, Այրիջուրը, Բողաքարը, Կալերը և Վարդանիձորը: Համայնքի տարածքով Արաքս թափվող գետերն են Կարճևանը, Մալևը, Աստազուր գետը, Նոնաձորը և այլն:

**Կլիմա:** Մեղրի համայնքը բնութագրվում է բարդ ռելիեֆով, խիստ կտրտվածությամբ և մասնատվածությամբ: Այդ պատճառով տեղանքի կլիման բնութագրվում է զով ամառներով և մեղմ ձմեռներով:

Լեռնային շրջանների օդի ջերմաստիճանը շատ բազմազան է, այն կախված է տեղանքի բարձրությունից, ռելիեֆի ձևից և լանջերի դիրքորոշումից:

Միջին բազմամյա օդի տարեկան ջերմաստիճանը Մեղրի կայանում 14.3°C:

Ուսումնասիրվող տարածքում, հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 26.3°C աստիճան է: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 43°C: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը 1.5°C է: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -18°C-ի: Մեղրիում ձյան ծածկույթի տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում 27սմ է: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-2 ամիս: Օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 0°C-ից ըստ Մեղրի օդերևութաբանական դիտակայանի տեղի է ունենում փետրվարի 12-ին և դեկտեմբերի 28-ին: 0°C-ից բարձր ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում կազմում է 317 օր:

Օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 5°C-ից, տեղի է ունենում փետրվարի 28-ին և դեկտեմբերի 3-ին: 5°C-ից բարձր օդի ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում 277 է:

Օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 10°C-ից, տեղի է ունենում մարտի 25-ին և նոյեմբերի 7-ին: 10°C-ից բարձր օդի ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում 226 է:

Տեղումների քանակը խոնավաբեր քամիների ուղղության նկատմամբ, ուղղակի կախվածության մեջ է լանջերի դիրքորոշումից, ինչպես նաև տեղանքի բարձրությունից: Ուսումնասիրվող տեղանքի տեղումների քանակը տեղաբաշխվում է ոչ համաչափորեն, որը կախված է խոնավաբեր օդային մասսաների նկատմամբ տեղանքի բարձրությունից և թեքությունից: Հողմակողմ թեքություններում տեղումների քանակը ավելի շատ է, քան քամուց պաշտպանված թեքություններում:

Տեղումների քանակի 43-49%-ը լինում է ցուրտ ժամանակաշրջանում (նոյեմբեր-մարտ), ամենաանձրևային ամիսներն են ապրիլը և մայիսը, ամենաչորայինը՝ դեկտեմբերը:

Մեղրիում տարեկան առավելագույն տեղումների քանակը կազմում է 280մմ:  
Ամսական առավելագույն տեղումների քանակը կազմել է 50մմ, իսկ օրականը՝ 53մմ:

Օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 38%-ից (օգոստոսին) 56% (հունվարին):

Ուսումնասիրվող շրջանում բնորոշ է լեռներից փչող տոթ ու չոր քամին: Հաճախ դրանք դիտվում են տարվա ցուրտ ժամանակ, կան վայրեր, որտեղ քամու ուղղությունը կտրուկ փոխվում է՝ դիտվում է ջերմաստիճանի բարձրացում և խոնավության անկում:

Մեղրի կայանում գերակշռում են հյուսիսարևելյան քամիները: Քամու միջին ամսական արագությունը տատանվում է 1.1-1.6 մ/վրկ սահմաններում: Տարվա ցուրտ եղանակին քամու արագությունը ավելի փոքր է, քան ամռանը:

Քամու տարեկան արագությունը Մեղրիում կազմում է 1.3 մ/վրկ :

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար հիմք են ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթուղթը:

**Աղյուսակ 1: Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Մեղրի օդերևութաբանական կայանի տվյալներով**

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան C°	Բացարձակ նվազագույն C°	Բացարձակ առավելագույն C°
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Մեղրի	627	1.5	3.5	8.2	14.1	18.8	23.2	26.3	25.9	21.5	15.3	9.3	4.0	14.3	-18	43

**Աղյուսակ 2: Օդի հարաբերական խոնավությունը Մեղրի օդերևութաբանական կայանի տվյալներով**

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15:00-ին	
														հունվարին	Օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Մեղրի	65	61	62	62	62	55	50	52	60	67	68	66	61	56	38

**Աղյուսակ 3: Մթնոլորտային տեղումները Մեղրի օդերևութաբանական կայանի տվյալներով**

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Չնաժառնկյալ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելագույն քանակը, մմ
	Ըստ ամիսների															
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Մեղրի	16	18	32	42	50	27	11	8	12	24	25	15	280	27	15	25
	25	22	32	36	46	38	39	53	28	35	45	18	53			

**Աղյուսակ 4: Քամի**

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնձում, (հՊա)		Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Մեծագույնը	Միջին ամսական	Միջին տարեկան
			Միջին արագություն, մ/վ										
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)			
Մեղրի	943,7	հունվար	9	5	22	13	11	9	14	17	55	1,3	1,3
			2,3	1,9	1,8	2,2	2,1	2,2	2,3	2,3			
		ապրիլ	9	9	34	21	9	3	6	9	54	1,3	
			2,4	1,8	1,9	2,3	2,2	2,2	2,3	2,4			
		հուլիս	12	8	36	24	6	2	4	8	44	1,6	
			2,1	2,1	2,0	2,4	2,1	1,9	2,1	2,1			
		հոկտեմբեր	12	9	32	21	8	3	6	9	60	1,1	
			2,3	1,8	1,7	2,1	2,1	1,9	2,0	2,1			

## 2.2. Երկրաբանություն

Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին էոցենի հրաբխածին-նստվածքային և վերին էոցեն-ստորին օլիգոցենի ներժայթքային ապարները:

Ստորին էոցենի հրաբխածին-նստվածքային առաջացումները պատկանում են Բաղաքսարի շերտախմբին և ներկայացված են ներժայթքային առաջացումներով, պարփակված անդեզիտային և անդեզիտա-դացիտային պորֆիրներով:

Վերին էոցեն-ստորին օլիգոցենի ներժայթքային ապարները հանդիսանում են Մեղրու պլուտոնի ներդրման երկրորդ փուլի արգասիքներ և ներկայացված են միմյանց հետ աստիճանական անցումներով կապված գրանոդիորիտներով, քվարցային դիորիտներով և տոնալիտներով:

Տարածաշրջանում տեղ գտած բազմափուլ տեկտոնական տեղաշարժերի արդյունքում գրանոդիորիտները ենթարկվել են ջարդոտման և ճեղքավորման: Առաջացած ճեղքերով հետագայում ներդրվել են դայկային ու երակային ապարները և ներթափանցել են հիդրոթերմալ լուծույթները: Հիդրոթերմալ լուծույթների շրջապտույտն առավել ինտենսիվ բնույթ է կրել բազմափուլ տեկտոնական խախտումների արդյունքում ձևավորված բազմաթիվ ճեղքերի խիտ ցանցում:

## 2.3. Մեյսմիկ բնութագիր

Տեկտոնական տեսակետից տվյալ տարածաշրջանը ներառված է Ծաղկունյաց-Զանգեզուրի (Մեղրիի) անտիկլինորիումային զոնայում, որը բնորոշվում է բայկալյան-ասինտյան հիմքի բարձրացված դիրքով: Զոնան հյուսիս-արևելքից սահմանափակվում է Շիրակ-Զանգեզուրի, իսկ հարավ-արևմուտքից՝ Անի-Օրդուբադի տեկտոնական խորքային բեկվածքներով: Այս զոնայի հիմնական լեռնակազմական գործընթացները արձանագրվել են պիրենեյան ծալքավորության շրջանում (էոցեն-միոցեն), իսկ եռոզոն մակերևույթը ձևավորվել է միջին-վերին պլիոցենում, մասամբ՝ չորրորդական ժամանակաշրջանում:

Ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի՝ ՀՀՆ 20.04.2020թ. տեղամասը գտնվում է II սեյսմիկ գոտու մեջ՝ առավելագույն հորիզոնական արագացումները 0,3-0,5g,  $A_{max}=0.4g$ , նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 6-8 բալ (Մեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության տվյալների):

## 2.4. Օդային ավազան

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի» ՊՈԱԿ կողմից:

Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 47 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 3 ժամը մեկ անգամ՝ սկսած ժամը 00:00-ից (Գրինվիչի ժամանակով), մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի վերաբերյալ իրականացվում են շուրջօրյա դիտարկումներ:



Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Քանի որ Մեդրի քաղաքում և տարածաշրջանում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ պաշտոնական տեղեկագրերում ներկայացված տվյալներ չկան, ուստի ներկայացնում ենք «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում իրականացված ծծմբի և ազոտի երկօքսիդի դիտարկումները, որն ամենամոտն է գտնվում ծրագրի իրականացման տարածքին (Քաջարան քաղաքը ծրագրի ուսումնասիրման տարածքից՝ Մեդրի քաղաքից գտնվում է 28 կմ հեռավորության վրա):


Ըստ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ տարածքում 2021 թվականի մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին ամփոփագրի՝ Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվել են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 դիտակետ:


Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

**Քաղաքի քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.**









## 2.5. Աղմուկ և թոթոմներ

Ուսումնասիրվող տարածքի վրա բացասաբար է ազդում նաև տրանսպորտային աղմուկը: Աղմուկի և թոթոման որոշակի բարձրացում սպասվում է նաև շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ: Աղմուկի և թոթոման մակարդակի ուսումնասիրման նպատակով, մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կիրականացվի աղմուկի և թոթոման գործիքային չափման աշխատանքներ, որի արդյունքները կընդունվեն, որպես ելակետային (ֆոնային) հետագա աշխատանքների իրականացման համար:

## 2.6. Ջրային ռեսուրսներ

**Ջրային ավազան:** ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոթերևուծաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Համաձայն «Հիդրոթերևուծաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2021 թվականի ՀՀ Շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրի Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 93 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

Ուսումնասիրվող հատվածները ընդգրկված են ՀՀ հարավային ջրավազանային կառավարման տարածքում, որը ներառում է Մեղրիի, Ողջիի, Գեղիի, Սիսիանի, Որոտանի, Վարարակի գետավազանները:

**Մեղրի գետը** գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի փոքր լճերից ու աղբյուրներից /3300 մ ծ.մ./ և Մեղրի քաղաքից ներքև /500 մ ծ.մ./ թափվում է Արաքս գետ: Գետի երկարությունը 36 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 336,3 կմ<sup>2</sup>: Խոշոր վտակն է Այրիջուրը: Վերին հոսանքում գետահովիտը V-աձև է, ստորինում՝ լայն:

Մնումը հիմնականում ձնաանձրևային (68%) է, վարարումը՝ զարնանը, որի ընթացքում ձնավորվում է տարեկան հոսքի 71%-ը: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

Մեղրի գետի գետավազանի Արաքս թափվող գետերն են Կարձևանը, Կարավգետը, Մալը, Աստղածորը, Շավիղը և Նոնածորը:

**Մակերևութային ջրերի որակ:** Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև ընկած հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կոբալտով, երկաթով, մանգանով և ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և ալյումինով: Կարձևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջով, թթվածնի քիմիական պահանջով, ամոնիում իոնով, մոլիբդենով, կոբալտով, սուլֆատ իոնով և կախյալ նյութերով:

**Ստորերկրյա ջրեր:** Լեռնային գոտիներում ստորերկրյա ջրերն ունեն լոկալ տարածում, իսկ գետահովիտներում և միջլեռնային գոգավորություններում տարածված են ջրատար հորիզոնները: Առանձնացվում են հետևյալ ստորերկրյա ջրային հորիզոնները և ջրակալած տեղամասերը՝

ա) Մեղրի գետի ավազանի ժամանակակից ( $Q_4$ ) ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների ջրատար հորիզոններ


բ) արտածին (էկզոգեն) ճեղքավորվածության, տարակազմ ինտրուզիվ ապարներում մակենոյթային ջրահոսքի ինֆիլտացիայի հետևանքով ջրակալած հորիզոններ, տեկտոնական խախտումների ճեղքային և ճեղքաերակային ջրեր (P<sub>2</sub>-N):

Ժամանակակից ( $Q_4$ ) ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների ջրատար հորիզոնի նստվածքները ավազատիղմային լցանյութով, գլաքարային և խճաքարային առաջացումներով, տարածված են Մեղրի գետի նեղ /100-300մ/ հովտում: Այս ջրատար հորիզոնի ջրերի մակարդակը տատանվում է 0.1-10.0մ սահմաններում և ամբողջովին կախված է գետի ջրի մակարդակից:

Մեղրիգետի գետավազանի ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները չեն հաստատվել պաշարների պետական կամ տարածքային հանձնաժողովներում: Մեղրիգետի գետավազանում ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսները, ըստ բազմամյա միջին տարեկան նշանակության, կազմում են՝ 59,21 մլն. մ<sup>3</sup>/տարի:

Շատ փոքր մակերեսային ջրատար հորիզոններ առկա են տվյալ տարածաշրջանի բազմաթիվ վտակների նեղ հովիտների ալյուվիալ նստվածքներում: Այդ փոքր ջրատար հորիզոնները ծառայում են որպես խմելու ջրի կարևոր աղբյուրներ Շվանիձոր և Նյուվաղի համայնքների համար, որոնք օգտագործում են մակերեսային ալյուվիալ ստորգետնյա ջրերը՝ հնագույն հորիզոնական ջրհորներով (ներթափանցող իջանցքներ):

ՀՀ հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



## 2.7. Հողեր

Շրջանին բնորոշ են լեռնային անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են չափավոր տաք կլիմայի պայմաններում, կաղնու և հաճարենու անտառատեսակների տակ, պորֆիրիտների, գրանոդիորիտների, կրաքարերի, ավազաքարերի հողմահարված նյութերի, ինչպես նաև ողողաբերուկային կավավազային և կավային կուտակումների վրա: Անտառային դարչնագույն հողերի տարածման շրջանների ռելիեֆին բնորոշ է բլուրների տեսքով բազմաթիվ բարձրունքներ, ինչպես նաև թմբեր և լանջեր, որոնք իջնում են կիրճերը և գետերի հովիտները:

Լեռնանտառային դարչնագույն հողերի ձևավորման բիոկլիմայական առանձնահատկությունները նպաստում են անտառային բույսերի համակեցությունների լավ աճին և մեծ քանակությամբ բուսական կենսազանգվածի առաջացմանը: Փոռցաշերտի հանքայնացման արդյունքում տարեկան հող է մտնում մոտ 510-520կգ/հա հանքայնացված տարրեր:

Լեռնային անտառային դարչնագույն հողերը հանդես են գալիս՝ կարբոնատային, տիպիկ, կրազերծված (լվացված) ենթատիպերով: Դիտարկվող տարածքին բնորոշ են տիպիկ և կրազերծված ենթատիպեր, որոնք բնութագրվում են դարչնագույն և մուգ դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ՝ 10-14%, որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումուսային նյութերում հումինաթթուների ու ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

Նկարագրվող հողերն ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է: Ռեակցիան չեզոք կամ չափավոր թույլ հիմնային է: Այս հողերն ունեն բարելավ ֆիզիկական ու ջրաֆիզիկական հատկություններ, լավ արտահայտված ստրուկտուրա:

Հողառաջացնող ապարներից տեղանքում առկա են դեյուվիալ և դեյուվիալ-պրոյուվիալ նստվածքների գենետիկական տիպերը:

Ծրագրի իրականացման տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը, թփերը, նաև հողային ծածկույթը և բուսահողը, քանի որ ուսումնասիրվող տարածքն ամբողջովին կառուցապատված է: Ծրագրի իրականացման տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տվյալները բացակայում են, քանի որ այն արդեն ամբողջովին կառուցապատված է:

## 2.8. Կենսաբազմազանություն

### 2.8.1. Բուսական աշխարհ

Մեղրու տարածաշրջանի բուսականությունը ներկայացված է Մեղրու ֆլորիստիկ գոտում: Բուսականության տարածումը հիմնականում պայմանավորված է բարձունքային գոտիականությամբ, սակայն բնական գոտիների վերին և ստորին սահմանները տատանումներ են տալիս, երբեմն բուսականության մի գոտիական տիպը թափանցում է մյուսի ոլորտը, ինչը պայմանավորված է ռելիեֆի, միկրոկլիմայական, հողային, ջրաբանական և այլ առանձնահատկություններով:

Իրար հաջորդում են կիսաանապատային, լեռնաանտառային, լեռնատափաստանային, մարգագետնատափաստանային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտները /բուսական տիպերը/: Չափազանց հետաքրքիր և հազվագյուտ տեսակներով հարուստ այս ֆլորիստիկ գոտում հանդիպում են այսպես կոչված խայտաբղետածաղկավոր բուսականությունը:

Շրջանն աչքի է ընկնում իր հարուստ ծառա-թփային բուսականությամբ՝ 191 տեսակներ: Հայաստանի ֆլորիստական շրջանների դենդրոֆլորայի և էկոլոգո-ցենոտիկ խմբերի համեմատական վերլուծությամբ բացահայտված է, որ այն հանդիսանում է ծառաբույսերի պահպանման համար առավել հեռանկարային օջախներից մեկը, որտեղ անհամեմատ հարուստ են ներկայացված բուսական տարբեր տիպեր և համակեցություններ՝ ընդգրկելով էկոբիոմորֆ և տաքսոնոմիական խմբերի բազմազանությամբ:

Տարածաշրջանի անտառները լեռնային են, ունեն հիմնականում ջրակարգավորիչ, հակաերոզիոն և միջավայրապաշտպան նշանակություն: Անտառածածկ տարածքների միջին լրիվությունը կազմում է 0,42: Անտառները հիմնականում տեղաբաշխված են 31°-ից բարձր թեքությունների վրա:

Անտառածածկում գերակշռում են կաղնու (83,7%) և գիհու (14,5%) նոսր անտառները: 750-ից 1200 մ բարձրություններում տարածված են արաքսյան կաղնու (*Quercus araxina*), 1200-ից 1500 մ վրա վրացական կաղնու (*Quercus iberica*), 1400-2500 մ վրա արևելյան կաղնու համակեցությունները, 2700մ-ից բարձր տիրապետում են մերձալպյան մարգագետինները:

Տարածքի եզրերին խոշորաեջ կաղնու (*Quercus macranthera*) հետ հանդիպում են Հացենին սովորական (*Fraxinus excelsior*), Բոխին սովորական (*Carpinus betulus*), Թխկին դաշտային (*Acer campestre*), Թխկին վրացական (*Acer ibericum*), Արոսենին հունական (*Sorbus greaca*), Ցախակեռասը կովկասյան (*Lonicera caucasica*), Մասրենին (*Rosa canina*),

Մամխին (*Prunus spinosa*), Գիհին երկարատերև (*Juniperus oblonga*) և այլն: Խոտածածկը հարուստ չէ, հանդիպում է Ֆրեյնի ոջլախոտ (*Delphinium freyni*), Երեքնուկ սողացող (*Trifolium repens* L.), Սրոհունդ ծակոսկեն (*Hypericum perforatum*), Ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), Ծվծվուկ խմբածաղիկ (*Silene compacta*) և այլն:

*Լեռնային տափաստանի* հատվածում միայնակ թփերով հանդիպում են Սզնին արևելյան (*Crataegus orientalis*) և Սզնին մեյերի (*Crataegus meyeri*):

Խոտածածկում դոմինանտ են հանդիսանում Յորնուկը չոլած (*Bromus squarrosus*) և Այծակնը սյունաձև (*Aegilops columnaris*): Հանդիպում են նաև Մակարդախոտ (*Teucrium polium*), Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*), Ավելուկ սովորականը (*Rumex acetosa* L.):

Մեղրու տարածքը ջրջանում հանդիպում են նաև ՀՀ բույսերի Կարմիր Գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները՝ Տերեփուկ Ալեքսանդրի (*Centaurea alexandrii*), Չազխոտ խոշորասպի (*Erysimum macrostigma*), Չանգակ Չանգեզուրի, (*Campanula zangezura*), Անտոխլամիս կաթնախոտային (*Anthochlamys polygaloides*), Թանթանիկ քառաչափ (*Sedum tetramerum*), Չմերուկ վայրի (*Citrullus colocynthis*), Անմեռուկ կլորատերև (*Andrachne rotundifolia*), Արգիրոլոբիում հացհամեմավոր, (*Argylobium trigonelloides*), Պայթակենի Կոմարովի (*Colutea komarovii*), Թրաշուշան Շովիցի (*Gladiolus szovitsii*), Հիրիկ Գրոսհեյմի (*Iris grossheimii* Woromow ex Grossh), Ժոբերգիա Շովիցի (*Jaubertia szovisii*), . Խոնդատ Մեղրու (*Verbascum megricum*):

Ծրագրի իրականացման տարածքում ՀՀ բույսերի Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակներ չկան:

Քանի որ ծրագրի տարածքը գտնվում է Մեղրի քաղաքի խառը կառուցապատման գոտում և կառուցապատված է բնակելի շենքերով, շինություններով, տներով և այլն, ուստի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում ծրագրի իրականացման տարածքի բուսական աշխարհի վրա ազդեցություններ չի դիտարկվում:

### **2.8.2. Կենդանական աշխարհ**

Կենդանական աշխարհի տեսակային կազմի վրա իրենց ազդեցությունն են թողել Իրանական, Անատոլական, Փոքր Կովկասի, մասամբ նաև Միջին Ասիայի կենդանաշխարհագրական մարզերը:

Տարածաշրջանը հարուստ է թռչունների ֆաունայով: Հայտնի են 141 տեսակներ և հիմնականում ներկայացված են անտառային տեսակներով (կասպիական հնդկահավ, մորուքավոր արծիվ, հարավ-եվրոպական բերկուտ, սպիտակագլուխ անգղ և այլն): Կարմիր գրքում ընդգրկված տեսակներից առաջին հերթին պետք է նշել կասպիական



ուլարը, Կովկասյան մարեհավը, գառնանգղը, որոնք Հայաստանում գտնվում են ռեալ անհետացման վտանգի տակ:

Հաճախ հանդիպում են սովորական և սևուկ կարմրատուտերը, հոպոպը, կապտափող սոխակը, սովորական տատրակը, ավելի հազվադեպ հանդիպում են փոքր տատրակը, սևագլուխ չքչքանը, պարող քարաթռչնակը, տնային բվիկը, եվրոպական բվիկը, ականջավոր բուն և այլն: Հավազգիները ներկայացված են 4 տեսակներով: Ժայռային ելքերով և քարքարոտ գառիվայրերով ենթալայան մարգագետիններում ոչ մեծ քանակով բնակվում է կասպիական ուլարը: Անտառային տափաստաններում և թփուտային ցանցառուտներում լայն տարածում ունի գորշ կաքավը: Քարակաքավները հաճախ են հանդիպում կիսաանապատների, լեռնային տափաստանների և մարգագետինների ժայռոտ բիոտոպներում: Բարձրախոտ մարգագետիններում բույն է դնում լորը:

Կաթնասուններից տարածաշրջանում հանդիպում են բազմաթիվ տեսակներ (գայլ, աղվես, կովկասյան անտառակատու, այծյամ, գորշուկ, լայնականջ ոզնի, հնդկական մացառախոզը, բեզուարյան այծը, վայրի ոչխարը՝ մուֆլոնը գորշ արջը, անտառային կատուն, այծյամը, վայրի խոզը, եվրոպական նապաստակը և այլն):

Այս կենդանիների մեծ մասը գրանցված է կենդանիների ՀՀ կարմիր գրքում այդ թվում՝ հնդկական մացառախոզը և լայնականջ ոզնին:

Այս տարածաշրջանում անտառներում և բաց չորային լանջերին սովորական հանդիպող կաթնասուններից են սովորական դաշտամուկը, աքիսը, քարակզաքիսը, սովորական ոզնին:

Անտառի վերին սահմանում, լեռնատափաստանային սարահարթերի գառիվայրերի վրա հազվադեպ են հանդիպում լուսանը և ավելի հազվադեպ առաջավորասիական ընձառյուծը, որը ընդգրկված է Բնության պահպանության Միջազգային Միության /ԲՊՄՄ/ Կարմիր ցուցակում:

Սողուններից տարածաշրջանում բնակվում են (անդրկովկասյան գյուրգա, ջրային և սովորական լորտու, դեղնափորիկ, հայկական իծ, կովկասյան ագաման, Դարևսկու ցեղի մի քանի տեսակի մողեսներ /ադրբեջանական մողեսը, նաիրյան մողեսը, բծավոր մողեսը, միջին մողեսը, որդանման կույր օձը, վզնոցավոր էիրենիսը, Հայկական էիրենիսը, կարմրափոր սահնօձը, արևմտյան վիշապիկը, ջարդվող իլիկամողեսը և այլն):

Տարածաշրջանում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներից քարքարոտ կիսաանապատներում և նախալեռնային քսերոֆիտ բուսականությամբ տեղամասերում հանդիպում են երկարավոտ սցինկը - *Eumeces schneideri*, խոնավ տեղամասերում, անտառեզրին, գետահովիտներում հազվադեպ հանդիպում են Կովկասյան կատվածօձը - *Telescopus fallax*, անդրկովկասյան սահնօձերը - *Elaphe hohenackeri*, իսկ միջազգային Կարմիր գրքում գրանցված տեսակներից են լեռնային քսերոֆիտ անտառներում և

լեռնային տափաստանների քարքարոտ լանջերին /1700-2200 մ/ հանդիպող հայկական իժը Vipera (Montivipera) raddri և նախալեռնային գոտում հանդիպող՝ միջերկրածովային կրիան–Testudo graeca:

Քանի որ ծրագրի տարածքը գտնվում է Մեղրի քաղաքային միջավայրում, որտեղ առկա է տրանսպորտային երթևեկություն, աղմուկ և այլն ուստի կենդանատեսակների առկայություն կամ տվյալ տարածքում հանդիպելու հնարավորություն չի դիտարկվում:

### ***2.8.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ***

ՀՀ Սյունիքի մարզի տարածքում առկա են հետևյալ հատուկ պահպանվող տարածքներ.

#### **«Արևիք» ազգային պարկ**

- Ազգային պարկի ստեղծման տարեթիվը՝ ՀՀ կառավարության 15. 10.2009թ. N 1209-Ն որոշում
- ՀՀ կառավարության 02.07.2015 թիվ 731-Ն որոշմամբ հաստատվել են ազգային պարկի սահմանները և որոշվել տարածքի մակերեսը՝ 31211.19 հա:
- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերի ծ.մ. 800- 3000մ
- Ստեղծման նպատակը՝ Մեղրի, Շվանիձոր և Նյուվադի գետերի ջրհավաք ավազանների տարածքներում բնական էկոհամակարգերի, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, բնական պաշարների, բնության եզակի հուշարձանների, էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային բնակության միջավայրերի պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու համար:

#### **«Շիկահող» պետական արգելոց**

- Արգելոցի ստեղծման տարեթիվը՝ ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. N 341 որոշում
- Տարածքը՝ 12137,075 հա
- Գտնվելու վայրը՝ Հարավային Հայաստան, Սյունիքի մարզ, Ծավ և Շիկահող գետերի ավազաններ, Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերը, ծ.մ. 700-2400 մ
- Ստեղծման նպատակը՝ Կաղնուտա-բոխուտային անտառների ու դրանց բնորոշ բուսական և կենդանական համակեցությունների, անթավոր բույսերի 1074 տեսակների, կենու և սոսու պուրակների, ողնաշարավոր կենդանիների 214 տեսակների պահպանություն:

#### **«Գորիսի» պետական արգելավայր**

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը ՀՍՍՀ ՍՍ 16.11.1972թ. N 775 հրահանգ
- Տարածքը՝ 1850 հա:

- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Որոտան գետի և նրա Վարարակն վտակի ավազաններում, Գորիսի անտառտնտեսության կազմում, ծ.մ. 1400-2800մ:
- Ստեղծման նպատակը՝ այծյամի, գորշ արջի, վայրի խոզի, մայրահավի և հազվագյուգ այլ կենդանատեսակների պահպանություն:

**«Մև լիճ» պետական արգելավայր**

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը ՀՀ կառավարության 12.10.2001թ. N 976 որոշմամբ:
- Տարածքը՝ 240 հա:
- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Սյունիքի բարձրավանդակի Մեծ Իշխանասար հրաբխային կոնի մերձկատարային մասում, ծ.մ. 2658 մ:
- Ստեղծման նպատակը՝ բարձր լեռնային և հրաբխային ծագման լճի ու նրան հարակից մերձալպյան բուսականության պահպանություն:

**«Սոսու պուրակ» պետական արգելավայր**

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. N 341 որոշում:
- Տարածքը՝ 64.2 հա:
- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Ծավ գետի հովտի ողողատային մասը, 700-750 մ. բարձրության վրա:
- Ստեղծման նպատակը՝ Կովկասի միակ սուսու բնական պուրակի պահպանությունը:

**«Զանգեզուր» պետական արգելավայր**

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը՝ ՀՀ կառավարության 15. 10.2009թ. N 1187-Ն որոշում
- ՀՀ կառավարության 02.07.2015 թիվ 731-Ն որոշմամբ սահմանվել է արգելավայրի տարածքը՝ 25711.6 հա:
- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի ծ.մ. 2100-3500 մ:
- Ստեղծման նպատակը՝ մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունն ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումը:

**«Բողարարի» պետական արգելավայր**

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը ՀՍՍՀ ՍՍ 10.08.1989թ. N 400 որոշում:
- Տարածքը՝ 2728 հա:

- Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Մեղրու տարածաշրջան, Հարավային Զանգեզուրի լեռնաշղթայի լանջերին, Մեղրի անտառտնտեսություն, 1400-2100մ:
- Ստեղծման նպատակը՝ հայկական ֆլորայի ու ֆանայի տարածաշրջանի տիպիկ ներկայացուցիչները:

**«Խուստուփ» պետական արգելավայր**

- Արգելավայրի ստեղծման տարեթիվը՝ ՀՀ կառավարության 19.12.2013թ. N 1465-Ն որոշում
- Տարածքը 6946.74 հա
- Գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատված
- Ստեղծման նպատակը՝ Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովում

Վերը թվարկված հատուկ պահպանվող տարածքները չեն առնչվում սույն ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների հետ:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, սույն ծրագրի իրականացումը որևէ ազդեցություն չի կարող ունենալ վերոհիշյալ հատուկ պահպանվող տարածքների վրա, քանի որ նշված տարածքներից գտնվում են մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

«Արևիք» ազգային պարկը գտնվում է Մեղրի քաղաքից մոտավորապես 1-10 կմ հեռավորության վրա, իսկ ծրագրի իրականացման տարածքից մոտավորապես 2 ավելի կիլոմետր հեռավորության վրա:

**2.8.4. Բնության հուշարձաններ**

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանների ցանկի ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում գտնվում են՝

Տեսակը	Անվանումը	Գտնվելու վայրը
--------	-----------	----------------

Երկրաբանական հուշարձաններ	«Մալի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալն գյուղի մոտ
Երկրաբանական հուշարձաններ	«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
Զրաերկրաբանական հուշարձաններ	«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
Զրագրական հուշարձաններ	«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ
Զրագրական հուշարձաններ	«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
Կենսաբանական հուշարձաններ	«Մեղրիի սուսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հուշարձանները, իսկ ծրագրի իրականացումը որևէ ազդեցություն չի կարող ունենալ ներկայացված բնության հուշարձանների վրա, քանի որ նշված տարածքներից գտնվում են մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

## 2.9. Հնագիտական, պատմական և մշակութային հուշարձաններ

Ենթածրագրերի իրականացման տարածք է հանդիսանում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Փոքր Թաղի պատմամշակութային վայրի տարածքը:

Մեղրին Հայաստանի հարավային քաղաքն է, որի տարածքը բնակեցված է եղել դեռևս նախնադարում, Հայաստանի կազմում եղել է Երվանդունիների և Արտաշեսյանների ժամանակաշրջանում: Ավելի ուշ Մեղրու շրջանի տարածքը կազմել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Արևիք գավառը: Այժմ Մեղրիում պահպանվել են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, որոնք կրում են տարածաշրջանի պատմությունը և պատմում քաղաքի հարուստ մշակույթի մասին:

Քաղաքի ամենահայտնի պատմամշակութային և զբոսաշրջային հատվածը Փոքր Թաղ կոչվող հին թաղամասն է՝ Հին Մեղրին: Փոքր Թաղում է գտնվում 17-րդ դարի եռանավ բազիլիկ կառուցվածքով Սուրբ Հովհաննես Մկրտիչ Եկեղեցին, որը հայտնի է իր բացառիկ որմնանկարներով, որոնք պատկանում են հայտնի մանրանկարիչներ

Հովնաթանյանների գրչին: Այստեղ է գտնվում բնիկ Մեղրեցիներ Խաչիկյանների Խաչաց տունը, որը կադաստրային տվյալներով, տոհմածառով ավելի քան 200 տարեկան է և համարվում է Մեղրի քաղաքի ամենահին պահպանված և ապրվող տունն է: Փոքր Թաղում կարող ենք առանձնացնել նաև Սյունիքում ժամանակին հայտնի բնիկ մեղրեցի, բժիշկ Մեծլուսյանի տունը, որը ևս կանգուն է և պահպանվում է: Հենց այս տների հարևանությամբ են գտնվում բնիկ մեղրեցիների տների ավերակները և իրենց մեջ կրում են քաղաքի պատմությունը, ճարտարապետական առանձնահատկությունը, մշակույթն ու դիմագիծը:

Համաձայն ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (15.03.2007թ. N 385-Ն) **Հավելված 2-ում** ներկայացված է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի օտարման ոչ ենթակա պատմության և մշակութային հուշարձանների ցանկը:

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (29.12.2005թ. N 2322-Ն) **Հավելված 3-ում** ներկայացված է Մեղրի քաղաքի Փոքր Թաղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

## 2.10. Մոցիալ-տնտեսական պայմաններ

«Մեղրիի Փոքր Թաղի զբոսաշրջային ենթակառուցվածքների վերականգնում» ենթածրագրի իրականաման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքը:

2020թ. վիճակագրական տվյալների համաձայն ՀՀ Սյունիքի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն` 17.1 %,
- գյուղատնտեսություն` 6.6 %,
- շինարարություն` 4.9 %,
- մանրածախ առևտուր` 2.0 %,
- ծառայություններ` 1.5%:

ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես` հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի

արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճուպանուղի):

Մարզի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ բերված են Աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5: ՀՀ Սյունիքի մարզի բնութագրերը**

Տարածքը	4 506 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.2 %
Համայնքներ, 2021թ. տարեսկզբի դրությամբ	8
▪ Քաղաքներ	7
▪ Գյուղեր	131
Բնակչության թվաքանակը 2021թ. տարեսկզբի դրությամբ այդ թվում՝	135.8 հազմարդ
▪ քաղաքային	91.8 հազ. մարդ
▪ գյուղական	44.0 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020թ., %	4.6 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020թ., %	67.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306 284.8 հա
▪ այդ թվում՝ վարելահողեր	43 966.7 հա

**Ծրագրի ազդակիր համայնքներ:** Նախատեսվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքը, Մեղրին գտնվում է Հայաստանի հարավում, և սահմանակից է Իրանին: Քաղաքը գտնվում է Մեղրի գետի ափին, հյուսիսարևելյան հատվածից շրջապատված է Զանգեզուրի լեռներով, իսկ հարավ-արևմտյան մասից՝ Մեղրու լեռնաշղթայով: Բարձրությունը ծովի մակարդակից 610 մ է:

Այն գտնվում է մայրաքաղաք Երևանից 376 կմ, իսկ մարզկենտրոն Կապանից 73 կմ հարավ: Մեղրին բաժանված է երկու թաղամասի՝ «Մեծ թաղ» և «Փոքր թաղ»: Առաջինը գտնվում է Մեղրի գետի ձախ, իսկ երկրորդը՝ գետի աջ ափին: Մեղրին համարվում է Հայաստանի ամենահին բնակավայրերից մեկը, քանի որ քաղաքի տարածքում հայտնաբերվել են Երկաթի դարաշրջանի ավերակներ և մնացորդներ:

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների, Մեղրի քաղաքի բնակչության ընդհանուր թվաքանակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 4234 մարդ:

**3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում: Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Մեծլումյան և Վազանց փողոցների հետիոտնային և տրանսպորտային ճանապարհների վերակառուցում:
- Մեծլումյան և Վազանց փողոցների խմելու ջրի, կոյուղու և ոռոգման համակարգերի վերակառուցում:
- Մեծլումյան և Վազանց փողոցների արտաքին լուսավորման համակարգի հիմնում:
- Փոքր Թաղի տարածքում կարճաժամկետ և երկարաժամկետ ավտոկայանատեղիների կառուցում:
- Մեծլումյան փողոցի Չինարի ծառի աղբյուրի մոտ գտնվող հանգստի գոնայի բարեկարգում:
- Մեծլումյան փողոցի Չինարի ծառի մոտ գտնվող համայնքային երկհարկանի շինության վերակառուցում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի:
- Եկեղեցի բարձրացող աստիճանների սկզբնամասում գտնվող հարթակի/տարածքի վերակառուցում:

Վերոնշյալ աշխատանքների իրականացման համար մշակվելու է աշխատանքային նախագիծ, որը պետք է ներառի՝

Մեծլումյան և Վազանց փողոցների և համանուն նրբանցքների վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակում:

Մեծլումյան և Վազանց փողոցների այն հատվածները, որոնք տանում են դեպի Փոքր Թաղի պատմական գոտի պետք է իրականացվեն ասֆալտբետոնե ծածկույթով, իսկ պատմական գոտում գտնվող հատվածները պետք է սալարկել բազալտե չորսվակասալերով կամ կոտրված բազալտաքարով:

Մեծլումյան և Վազանց փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 2.00 կմ, իսկ ընդհանուր մակերեսը՝ մոտ 7754 քմ: Ասֆալտբետոնե ծածկույթով նախատեսվում է իրականացնել 1.20 կմ ճանապարհ (մակերեսը 5580 քմ), իսկ բազալտե սալարկումով՝ 0.82 կմ ճանապարհ (մակերեսը 2175 քմ):

Փոքր Թաղի ճանապարհների լայնությունը զգալիորեն սահմանափակում է երկկողմանի մայթերի իրականացման հնարավորությունը: Հետևաբար, ճանապարհների նեղ հատվածներում կոչիտարկվի մինիմալ լայնությամբ (0.75 մ) միակողմանի մայթերի իրականացման հնարավորությունը:

Մեծլումյան և Վազանց փողոցների և համանուն նրբանցքների նոր ե/բ հենապատերի/պարապետների կառուցման և/կամ գոյություն ունեցող հենապատերի վերականգնման, ցանկապատի կառուցման, անձրևատար համակարգի կանոնակարգման և գոյություն ունեցող համակարգերի վերականգնման աշխատանքներ: Մեծլումյան և Վազանց փողոցների գոյություն ունեցող



Էլեկտրամատակարարման և կապի օդային/ վերգետնյա գծերի կանոնակարգում, որտեղ հնարավոր է դրանք ստորգետնյա եղանակով վերատեղադրում՝ գծերը տնօրինող կազմակերպությունների համաձայնությամբ:

Փոքր Թաղի տարածքի հարմարեցում բնակչության սակավաշարժ խմբերի համար (թեքահարթակներ, թույլ տեսողություն ունեցող մարդկանց համար նախատեսված սալահատակ և այլն): Այդ աշխատանքներն իրականացվելու են ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:

Փոքր Թաղի տարածքի կահավորում զբոսաշրջային ցուցանակներով, նստարաններով և աղբամաններով:

Մեծլույսյան և Վազանց փողոցների նշագծում, լուսատուների և երթևեկության նշանների տեղադրում:

Մեծլույսյան և Վազանց փողոցների և համանուն նրբանցքների խմելու ջրի, կոյուղու և ոռոգման համակարգերի վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակում:

**Խմելու ջրի բաշխիչ ցանցի** վերակառուցում՝ նախատեսում է խորհրդային ժամանակաշրջանում կառուցված պողպատե խողովակների փոխարինում պոլիէթիլենային ճնշումային խողովակներով՝ կրկնելով գործող ջրամատակարարման սխեման: Բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 1120 մ, իսկ տնային միացումների խողովակների ընդհանուր երկարությունը՝ մոտ 220 մ:

**Կոյուղու համակարգի** վերակառուցում՝ նախատեսում է խորհրդային ժամանակաշրջանում կառուցված խողովակների փոխարինում պոլիէթիլենային խողովակներով՝ մեծամասամբ կրկնելով գործող կոյուղու սխեման: Ըստ նախնական գնահատականների կոյուղու համակարգի խողովակների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 845 մ:

**Ոռոգման համակարգի** վերակառուցում՝ նախատեսում է քայքայված բետոնե ջրանցքների վերականգնում և ճանապարհների խողովակ անցումների ըստ անհրաժեշտության փոխարինում: Ըստ նախնական գնահատականների ոռոգման համակարգի ջրանցքի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 244 մ, իսկ խողովակ անցումների ընդհանուր երկարությունը՝ մոտ 92 մ:

Մեծլույսյան փողոցի Չինարի ծառին հարակից տարածքում կարճաժամկետ ավտոկայանատեղիի կառուցում: Կայանատեղին նախատեսվում է կառուցել մոտ 177 քմ մակերես ունեցող տարածքի վրա և ծառայելու է որպես կարճաժամկետ կայանատեղի միկրոավտոբուսների համար:

Մեծլույսյան փողոցի Չինարի ծառի աղբյուրի մոտ գտնվող հանգստի զոնայի բարեկարգում: Բարեկարգման աշխատանքները նախատեսում են հանգստի զոնայի և վերը նշված հրապարակի ծածկույթի վերակառուցում բազալտե չորսվակասալերով կամ

կոտրված բազալտաքարով, ինչպես նաև հանգստի գոնայի կահավորում հարմարավետ նստարաններով, շվաքարաններով և աղբամաններով: Վերակառուցման ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 172 քմ:

Հիմնական ճանապարհից դեպի Չինարի ծառ հատվածում գտնվող համայնքապատկան տարածքում նախատեսվում է իրականացնել երկարաժամկետ ավտոկայանետեղիի կառուցում:

Կայանատեղին նախատեսում է կառուցել մոտ 660 քմ մակերես ունեցող տարածքի վրա և ծառայելու է որպես երկարաժամկետ կայանատեղի տուրիստական ավտոբուսների համար:

Մեծլույսյան փողոցի Չինարի ծառին հարակից տարածքում գտնվող համայնքային երկհարկանի շինության վերակառուցումը զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի նախատեսում է գոյություն ունեցող շինության հիմնովին քանդում և նոր շինության կառուցում:

Վազանց փողոցի՝ Սբ Հովհաննես (նախկինում Սբ Սարգիս) եկեղեցի բարձրացող աստիճանների սկզբնամասում գտնվող հարթակի/տարածքի մաշված ասֆալտբետոնե ծածկույթը պետք է փոխարիվի բազալտե չորսվակասալերով կամ կոտրված բազալտաքարով՝ ստեղծելով ամբողջապես բազալտե քարով սալապատված ճեմուղիներ:

Փոքր թաղի տարածքը նախատեսվում է կահավորել զբոսաշրջային (4-6 հատ) և ճանապարհային (ըստ պահանջի) ցուցանակներով, նստարաններով (15-20 հատ) և աղբամաններով (45-50 հատ):

Շինարարական աշխատանքների ժամանակ բոլոր ապամոնտաժված խողովակագծերը, փողոցների առկա էլեկտրական մատակարարման վերգետնյա մալուխները, կապի գծերը, փողոցների վերանորոգվող հատվածների կոյուղու, ոռոգման և անձրևաջրերի հեղեղատար խողովակագծերը և վերադարձվելու են կոմունիկացիաների սեփականատերերին:

Շինարարական աշխատանքների ընթացքում հեռացվող ասֆալտբետոնյա ծածկույթը վերադարձվելու է «ՄԵՂՐՈՒ ԸՇՇԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հետագա վերամշակման և համայնքի այլ տարածքներում օգտագործման նպատակով:

Փոխարինվող/ապամոնտաժվող ենթակառուցվածքների և հեռացվող ասֆալտբետոնյա ծածկույթի ծավալների, գծամետրերի և քանակների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը կհստակեցվի նախագծման աշխատանքների ընթացքում և կտրամադրվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ՝ ամրարձիչ, էքսկավատոր, կռունկ, բեռնատար և ինքնաթափ մեքենաներ, ավտոգողորոնատոր, թրթրագլղոն: Վերջիններս լինելու են կապալառու կազմակերպության մեքենաները: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածներում, շինարարական հրապարակում՝ ճանապարհի եզրին: Այն պատմամշակութային հատվածներում, որտեղ հնարավոր չի լինի աշխատանքներն իրականացնել շինարարական տեխնիկայի միջամտությամբ՝ կկատարվի առանց դրանց (ձեռքի աշխատանքներ):

Նախատեսվող գործունեության իրականացումը գնահատվել է առավելագույնը 360 օր:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ												
<i>«Մեղրիի Փոքր Թաղի զբոսաշրջային ենթակառուցվածքների վերականգնում» ենթածրագրի նախատեսված շինարարական աշխատանքների</i>												
<i>Նախատեսվող գործունեության իրականացումը տևելու է առավելագույնը 12 ամիս:</i>												
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	Ամիսներ											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
<b>Աշխատանքների անվանումը</b>												
Նախապատրաստական աշխատանքներ	██████████											
Լաբորատոր փորձարկման աշխատանքներ	██											
Հողային աշխատանքներ	██											
Ծածկի իրականացման աշխատանքներ						██						
Հենապատերի նորոգման աշխատանքներ				██			██					
Սայթերի իրականացման աշխատանքներ				██								
Բնժեներական կոմունիկացիաների վերատեղադրման և նորերի տեղադրման աշխատանքներ				██								
Բնֆորմացիոն կենտրոնի կառուցման աշխատանքներ			██									
Հետիոնտային անցումների կառուցման աշխատանքներ							██					
Անվտանգության էլեմենտների կառուցման աշխատանքներ										██		

**3.1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄ**

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է:

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Մենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի

աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակում նախատեսվում է՝

- Շարժական վագոն տնակ՝ գրասենյակ 1 հատ
- Ճաշարան 1հատ
- Հանդերձարան
- Լոգարան
- Բիոզուգարան՝ լվացարանով
- Աղբի տարաններ

ինչպես նաև

- Հակահրդեհային վահանակներ,
- Ավտոմեքենաների կայանման, առասանման ճուպանների տեղակայման վայրեր,
- Պահակատուն,
- Շինարարական նյութերի, գործիքների պահեստներ,
- Շինհրապարակում լինելու են նաև ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ:

Շինհրապարակը առանձնանալու է երթևեկությունը կարգավորող ճանապարհային նշաններով՝ անվտանգության նորմատիվների համաձայն:

Համայնքային երկհարկանի շինության վերակառուցման տարածքը առանձնացվելու է նաև ցանցապարիսպով՝ փոշու տարածումը կանխելու նպատակով:

Մինչև շինարարության սկսելը շինհրապարակում կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրի պահանջարկն ապահովվելու է ջուրը տարրաներով բերելու եղանակով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրամատակարար կազմակերպության հետ):

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչը աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է: Բիոզուգարանների տեղադրումն ու սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի սվյալ ոլորտում մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններից մեկի հետ):

Շինարարության փուլում էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ:

Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած ջրերը հավաքվելու են հատուկ տարողության մեջ և հետագայում վերօգտագործվեն շինարարական հրապարակների ջրցանման համար, շինարարական հրապարակում այլ բնույթի հոսքեր չեն առաջանալու:

Շինարարական հրապարակից անձրևաջրերի հեռացումն իրականացվելու է տարածքու գոյություն ունեցող սելավատարների միջոցով: Շինարարական հրապարակի կազմակերպման հաստակագիծը ներկայացված է **Հավելված 4-ում**:

### **3.2. ԵՐԹՆԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Փողոցների վերանորոգման ընթացքում երթևեկությունը կկարգավորվի ըստ երթևեկության կազմակերպման պլանի, որը ներկայացված է Հավելված 3-ում:

Երթևեկության կառավարման պլանը (ԵԿՊ) մի փաստաթուղթ է, որը վերլուծում է բոլոր հարակից տարրերն ու ռիսկերը, որոնք կարող են ազդել աշխատանքների վրա:

ԵԿՊ օգտագործվում է գոյություն ունեցող ճանապարհային ցանցի և դրա օգտագործողների կառավարումը նկարագրելու համար՝ առավելագույնի հասցնելու անվտանգությունը, արդյունավետությունը և հուսալիությունը:

ԵԿՊ-ի նպատակն է՝ օգտագործելով ժամանակակից անվտանգության նախագծման սկզբունքները և համապատասխան օրենսդրությանը համապատասխանելը, օպտիմալացնել ճանապարհների տարածքի բաշխումը, հնարավորինս ապահովելով երթևեկության և հետիոտների արդյունավետ հոսքը՝ միաժամանակ պաշտպանելով ճանապարհների խոցելի օգտվողներին:

Շինարարական աշխատանքների ընթացքում ճանապարհի կառավարումը բարդ աշխատանք է, որը ներառում է բազմաթիվ խնդիրներ. ուղևորների, ավտոբուսների, բեռնափոխադրումների և զբոսաշրջիկների շարժի կառավարում, տրանսպորտի և տրանսպորտային միջոցների բոլոր տարբերակների միջոցների կառավարումը:

### **3.3. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

- Շինարարական հրապարակ մուտք և ելք
- Երթևեկության կառավարման նշանների տեղադրում
- Շինարարական երթևեկության / ճանապարհների փակման ուղղություն
- Երթևեկության կառավարման արագության սահմանափակումներ.
- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- Շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուններով և սահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,

Երթևեկության կազմակերպման սխեման ներկայացված է **Հավելված 5-ում**:

#### **4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼ ՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն հայտի նախապատրաստման ընթացքում գնահատվել են շինարարական, ավարտական և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա ակնկալվող հնարավոր ազդեցությունները:

Կատարվել է շինարարական աշխատանքների նախապատրաստման, շինհրապարակների կազմակերպման և բուն շինարարության ժամանակ հավանական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Նախապատրաստական աշխատանքները նախատեսում են.

- օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, համաձայնությունների հավաստագրերի ձեռքբերումը,
- շին. ճամբարների ու շինանյութերի պահեստավորման տարածքների պլանավորումը,
- օդի, հողի, ջրերի աղտոտումը կանխարգելող միջոցառումների ապահովումը,
- արտակարգ իրավիճակների կառավարման պլանի առկայությունը և այլն:

Շինարարության կապալառուի բնապահպանական, սոցիալական և անվտանգության հարցերով ինժեները պետք է գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը և սահմանի դրանց կառավարման պլանը, անվտանգության հրահանգները:

Իրականացված ուսումնասիրությաննների արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գործունեության իրականացման/շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի անբարենպաստ ազդեցություններ: Ազդեցությունը կլինեն ժամանակավոր և կարող են արդյունավետորեն կառավարվել մեղմացնող միջոցների կիրառմամբ: ԲԿՊ-ն և մոնիթորինգի ծրագիրը կիրականացվի կապալառուի կողմից շինարարության փուլում, իսկ ԲԿՊ-ի համապատասխան դրույթները կընդգրկվեն շինարարական աշխատանքների պայմանագրերի ընդհանուր մասնագրերում՝ ԲԿՊ-ի իրականացումն ապահովելու համար: Բնապահպանական մոնիթորինգի պլանը կազմելու է մրցութային փաստաթղթերի բաղկացուցիչ մաս:

##### **4.1. Շինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվող ազդեցություններ**

*Շինարարության փուլում կանխատեսվում են հետևյալ հիմնական ազդեցությունները.*

###### **4.1.1. Օդային ավազանի աղտոտվածություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակակալոր արտանետումներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազանի արտանետումները կլինեն ժամանակավոր և տեղայնացված: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների ծավալը և տևողությունը ակնկալվում է, որ այն չի գերազանցի ՀՀ հաստատված սահմանային թույլատրելի նորմերը:

#### ***4.1.2. Աղմուկ և թրթռումներ:***

Շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում հնարավոր աղմուկը և թրթռումները կարող են անհանգստություն պատճառել մոտակա շենքերի/տների բնակիչներին և կառույցներին:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, այնումենայնիվ որևէ կառույցի հասցված վնասը պետք է կապալառուի կողմից վերականգնվի կամ փոխհատուցվի::

Աղմուկի և թրթռման մակարդակի ուսումնասիրման նպատակով, մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կիրականացվի աղմուկի գործիքային չափման աշխատանքներ, որի արդյունքները կընդունվեն, որպես ելակետային (Ֆոնային) հետագա աշխատանքների իրականացման համար, այնուհետև աղմուկի և թրթռման գործիքային չափումները կիրականացվի պարբերաբար՝ ըստ շինարարական աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի:

Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների լրացուցիչ գործիքային չափումներ:

Ծրագրի իրականացման ժամանակ թրթռման մակարդակի գերազանցումներ չեն ակնկալվում,

#### ***4.1.3. Զրոգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցություններ***

Ծրագրի իրականացման տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ, իսկ ստորերկրյա ջրերը գտնվում են մի քանի հարյուր մետր խորության վրա, ուստի մակերևութային և ստորերկրյա ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքները իրականացվելու են

առանձնացված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի հնարավոր արտահոսքերը և արտանետումները դեպի մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումն իրականացվելու ջուրը տարրաներով բերելու եղանակով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրամատակարար կազմակերպության հետ):

Շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝ (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրամատակարար կազմակերպության հետ), իսկ ջրի հաշվարկային ծախսը կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Շինարարական աշխատանքների արդյունքում, մակերևութային և ստորերկրյա ջրերի վրա ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ ծրագրի իրականացման տարածքը գտնվում է:

#### ***4.1.4. Թափոնների առաջացում***

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը, շինարարական աղբը և քանդված հանված հողային զանգվածի որոշ մաս, որը չի օգտագործվելու հետլիցքի աշխատանքների ժամանակ:

#### **«Տեղեկատվություն թափոնների հետագա կառավարման վերաբերյալ»**

Առաջացող շինարարական աղբը, ինչպես նաև հողի ավելցուկային զանգվածը կտեղափոխվի Մեդրիի համայնքապետարանի կողմից հատկացված համապատասխան վայր, իսկ կենցաղային աղբի տեղափոխման համար կկնքվի պայմանագիր աղբահեռացումն իրականացնող համապատասխան կազմակերպության հետ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբի, հետլիցքի համար ոչ պիտանի նյութի և կենցաղային աղբի քանակների, ծավալի և տեղադրման վայրերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:



#### ***4.1.5. Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա***

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում որևէ ծառերի և թփերի հատում, ինչպես նաև նոր ծառերի, թփերի տնկում և կանաչ տարածքների ստեղծում չի նախատեսվում: Շինարարության ողջ ընթացքում պահպանվելու են տարածքում առկա բոլոր ծառերը և թփերը, ինչի վերահսկումն կիրականացվի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողի և ՀՏԶ-ի համապատասխան մասնագետների կողմից:

**Կենսաբազմազանության վրա ազդեցություններ:** Քանի որ ծրագրի տարածքը գտնվում է արդեն իսկ ամբողջովին կառուցապատված քաղաքային միջավայրում, որտեղ առկա է տրանսպորտային երթևեկություն, աղմուկ և այլն ուստի կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները սույն նախնական գնահատման հայտում չի դիտարկվում:

#### ***4.1.6. Մշակութային ժառանգություն***

Ենթածրագրի իրականացման վայրն է Մեդրիի Փոքր թաղ պատմամշակութային տարածքը: Ծրագրի իրականացման արդյունքում հնագիտական կամ մշակութային ռեսուրսների հայտնաբերում չի ակնկալվում, քանի որ հիմնականում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերականգնում:

#### ***4.1.7. Սոցիալական ազդեցություններ***

Շինարարության ընթացքում հարակից տների և շենքերի բնակիչները կարող են ենթարկվել սոցիալական բնույթ կրող որոշակի բացասական ազդեցությունների (աղմուկ, փոշի, երթևեկության ժամանակավոր խաթարումներ և այլն), որոնք միասին կարող են առաջացնել գումարային ազդեցություններ: Սակայն դրանք լինելու են կարճաժամկետ և էականորեն մեղմացվելու են հատուկ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Ծրագիրը կարող է փոխել համայնքի ռիսկերի և ազդեցությունների ենթարկվելը, որոնք կարող են առաջանալ պատահարների և ենթակառուցվածքների քանդմամբ: Շինարարության ընթացքում համայնքի առողջության և անվտանգության ազդեցության ենթարկվելու վտանգը կարող է պայմանավորված լինել նաև աղմուկի ազդեցությամբ, հողի տեղափոխմամբ պայմանավորված փոշու և այլ արտանետումներով, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների շահագործմամբ:

Ծրագրի շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած սոցիալական ազդեցությունները կարելի է նվազեցնել շինարարական գործընթացների և առաջարկվող մեղմացնող միջոցառումների պատշաճ կազմակերպմամբ:

Շինարարական աշխատանքներից հետո, մինչև այն վերջնական հանձնելը, կապալառուն պարտավոր է բարեկարգել տարածքը՝ հեռացնելով շինարարության հետ կապված նյութերն ու թափոնները:

**4.1.8. Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ:**

Վտանգը կարող է առաջանալ առողջության և անվտանգության կանոնների ոչ պատշաճ իրագործման դեպքում: Անվտանգության միջոցառումների և համապատասխան երկարատև շինարարական փորձի պատշաճ կիրառման դեպքում վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում հիմնականում վտանգներ չեն ակնկալվում:

**4.1.9. Արտակարգ իրավիճակներ**

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ, ինչպես նաև անբարենպաստ օդերևութաբանական պայմաններով պայմանավորված արտակարգ իրավիճակներ կարող են տեղի ունենալ:

Ամփոփելով շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները, հարկ է նշել, որ այդ աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի քաղաքային լանդշաֆտը, որի համար հիմք կհանդիսանա բնապահպանական կառավարման պլանում սահմանված բնապահպանական և սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացումը:

**4.2. Ազդեցություններ շահագործման փուլում**

*Շահագործման փուլում կանխատեսվող հիմնական ազդեցություններն են.*

**4.2.1. Օդի որակ**

Երթևեկության ավելացման հետևանքով հնարավոր է ավելանան նաև արտանետումները, սակայն այս ազդեցությունները կլինեն աննշան:

**4.2.2. Աղմուկ**

Ճանապարհի և ենթակառուցվածքների շահագործման ժամանակ ակնկալվում է աղմուկի մակարդակի ոչ էական ավելացում:

**4.2.3. Սոցիալ-տնտեսական հետևանքներ**

Ներկայացվող գործունեության իրականացումը կնպաստի Փոքր Թաղի պատմամշակութային վայրի վերակենդանացմանը և բարելավմանը, հարմարավետ

տրանսպորտային հաղորդակցության ապահովմանը, դրական ազդեցություն կունենա զբոսաշրջության զարգացման վրա՝ կավելացնի զբոսաշրջիկների քանակը տարածաշրջանում, կստեղծվեն հավելյալ մշտական և ժամանակավոր աշխատատեղեր և տնտեսական օգուտներ:

Բացի վերոնշյալից ենթածրագրի իրականացումը նաև հնարավորություն կստեղծի բնակիչների համար ունենալու ժամանակավոր աշխատանք՝ նրանց ներգրավվելով իրականացվելիք շինարարական աշխատանքներում:

## **5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Նախորդ գլխում նկարագրված ազդեցությունները բացառելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեղմումը ապահովելու համար, նախատեսված է մշակել բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլաններ, որոնց շնորհիվ կապահովվի բնապահպանական և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների իրականացումը:

ԲԿՊ-ի և մոնիտորինգի պլանի մշակման համար ենթածրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխամ ուսումնասիրություններ և նախապատրաստական աշխատանքներ, որոնք ընդգրկել են.

- Ինժեներակրթական ուսումնասիրությունների արդյունքները
- ՀՀ-ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը
- Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով
- նախատեսվող գործունեության տարածքում առկա ենթակառուցվածքների ուսումնասիրությունը, ներառյալ՝ ջրագծերի, էլեկտրագծերի, հեռահաղորդակցման գծերի հնարավոր առկայությունը,
- շինարարական ճամբարների, ենթակառուցվածքների և գրասենյակների, նյութերի պահեստների և մեքենա-սարքավումների տեղակայման համար առավել նպատակահարմար վայրերի ընտրությունը,
- շինարարական ճամբարի պատշաճ տեղակայումն ու կազմակերպումը,
- թափոնների հեռացման վայրերի ճշտումը,
- շինարարությունից հետո շինարարական հրապարակների, ճամփեզրերի և միջնամասերի բարեկարգումը:
- արտակարգ իրավիճակների արձագանքման գործողությունների մշակում
- հակահրդեհային անվտանգության միջոցառումներ

Ելնելով վերը թվարկված դրույթներից մշակվել է բնապահպանական և սոցիալական միջոցառումների/գործողությունների ծրագիր (ներկայացվում է ստորև Աղյուսակ 6), որի

հիման վրա ՇՄԱԳ հաշվետվության փուլում կմշակվեն և կներկայացվեն բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլանները:

### **5.1. Շինարարության փուլ**

Շինարարության փուլը, դա այն ժամանակահատվածն է երբ շրջակա միջավայրի վրա տեղի են ունենում հիմնական ազդեցությունները:

Քանդված նյութերի և շինարարական աղբի տեղադրման հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար շինարարության համար լրացուցիչ նյութերի ձեռքբերումը հնարավորության դեպքում պետք է իրականացվի գոյություն ունեող հանքավայրերից, իսկ քանդված նյութերի և շինարարական աղբի տեղադրումը հնարավորության դեպքում պետք է իրականացվի գոյություն ունեցող փոստրակներում՝ նվազեցնելով նոր հանքավայրերի ձեռքբերման անհրաժեշտությունը:

Աշխատանքային տեղամասերը պետք է հստակ ուրվագծված լինեն և պետք է հետևել, որպեսզի շինարարական աշխատանքների ընթացքում այն անհարկի չընդլայնվի:

Ճանապարհի վրա աշխատողները իրենց իսկ անվտանգության համար պետք կրեն անհատական պաշտպանիչ պարագաներ: Շինարարական հրապարակներից եկող փոշին և աղմուկը նույնպես պետք է նվազեցվեն հատկապես բնակեցված հարակից տարածքներում:

Առաջարկվող մեղմացնող միջոցառումների մանրամասները ներկայացված են ստորև.

#### **5.1.1. Օդային աղազան**

Շինարարական հրապարակներում և մոտեցնող ճանապարհներին փոշու ազդեցությունը կանխարգելելու նպատակով կիրականացվի տարածքների պարբերաբար ջրցանում: Շինարարական աշխատանքների ընթացքում մեքենաների ծխազագային արտանետումների և փորման/քանդման աշխատանքների հետևանքով կմեծանա օդի աղտոտվածությունը:

Շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար ջրցանումը կնվազեցնի փոշու ազդեցությունը: Շինարարական հրապարակներից փոշու ազդեցությունը նվազեցնելու համար շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) և թափոնների տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:

Օդի որակի պահպանության նպատակով նախատեսվում է իրականացնել նաև նյութերի պահեստավորումը հատուկ առանձնացված տարածքներում, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաների տեղաշարժը հաստատված երթուղիներով և ժամանակացույցով:

### **5.1.2. Աղմուկ և թոթումներ**

Մոտակա համայնքների բնակիչների, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված մարդկանց վրա աղմուկի և թոթուման ազդեցությունները շինարարության ընթացքում բացառելու, մեղմելու և/կամ նվազագույնի հասցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ;
- Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը

### **5.1.3. Ջրօգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցությունների կառավարում**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- Շինհրապարակների փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը հավաքվելու են հատուկ տարողության մեջ և վերօգտագործվեն շինարարական տարածքների ջրցանման համար,
- անձրևաջրերը հեռացվելու են տարածքից գոյություն ունեցող սելավատարներով,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և տարողությունում հավաքված/ կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացվելու մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կետերում:

### **5.1.4. Թափոնների կառավարում**

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շինարարական հրապարակում առանձնացվել է շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները հնարավորինս կտեսակավորվեն/կառանձնացվեն մետաղները, փայտերը և այն ամենը ինչը հնարավոր կլինի վերաօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում և մնացած մասը կտեղափոխվի հատկացված վայր,
- շինարարության ընթացքում կենցաղային աղբը հավաքվելու է համայնքային աղբահավաք տարողությունների մեջ,
- բացառվելու է կենցաղային աղբի այրումը,
- շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր կատարվելու է փակ ծածկ ունեցող բեռնատարներով,
- շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումն իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված վայր:
- բացառվելու է աղբի նախնական կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:

#### ***5.1.5. Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների կառավարում***

Ինչպես արդեն ներկայացվել է սույն հաշվետվության 4.1.5 բաժնում սույն ծրագրի իրականացման տարածքը գտնվում է արդեն իսկ ամբողջովին կառուցապատված քաղաքային միջավայրում, որտեղ առկա է տրանսպորտային երթևեկություն, աղմուկ և այլն ուստի բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները սույն նախնական գնահատման հայտում չի դիտարկվում, համապատասխանաբար նաև չեն ներկայացվում ազդեցությունները մեղմացնող, նվազեցնող և կանխարգելող միջոցառումներ:

#### ***5.1.6. Մշակութային ժառանգություն վրա ազդեցությունների կառավարում***

Ենթածրագրի իրականացման վայրն է Մեդրիի Փոքր թաղ պատմամշակութային տարածքը, որտեղ առկա պատմության և մշակութային հուշարձանների ցանկը ներկայացված է սույն հաշվետվության հավելված 2-ում և հավելված 3-ում:

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, զիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել

աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Աշխատանքները կշարունակվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից համապատասխան հրահանգավորումներ ստանալուց հետո:

### ***5.1.7. Սոցիալական ազդեցությունների կառավարում***

Փոշին, դիզելային վառելիքի այրման արգասիքները, աղմուկի մակարդակի ավելացումը, թոթոռումները Բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության վրա, իսկ երթևեկության հնարավոր ինտենսիվացումը ժամանակավոր անհարմարություններ կարող է ստեղծել գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար, սակայն այդ բոլոր ազդեցությունները կառավարելի են կարճաժամկետ և պայմանավորված միայն շինարարական աշխատանքների ընթացքով և համապատասխան միջոցառումների իրականացման պարագայում այդ ազդեցությունները կնվազեցվեն և կկանխարգելվեն:

Բնակչության անհանգստացումը մեղմելու համար պետք է համայնքներին պարբերաբար համապատասխան տեղեկատվություն տրվի ծրագրի վերաբերյալ (այդ թվում, շինարարական աշխատանքների գտնվելու վայրը և տևողությունը):

Տեղական բնակչությանը պետք է պատշաճ կերպով տեղեկացնել շինարարական աշխատանքների մեկնարկի մասին (տեղեկությունները առաջարկվող շինարարական աշխատանքների վերաբերյալ պետք է հասանելի լինեն ՀՏԶ, տեղական ինքնակառավարման մարմինների կայքում, ինչպես նաև համայնքային տեղեկագրերի, տեղական հեռուստատեսության և համայնքների ղեկավարների միջոցով):

Շինարարական աշխատանքների մեկնարկի, տրանսպորտային միջոցների շարժման սահմանափակման, այլընտրանքային մոտեցման և շրջանցման կազմակերպման մասին ծանուցումը պետք է տրամադրվի ազդակիր համայնքներին նախօրոք:

Ծրագիրը պետք է ունենա բողոքների լուծման հաստատված մեխանիզմ, որը թույլ կտա ազդակիր կողմերին բարձրացնել իրենց մտահոգությունները և ստանալ հետադարձ կապ: Բողոքարկման վերանայման քայլերի և փոխհատուցման ընթացակարգի մասին, ինչպես նաև բողոքարկման բանաձևում ներգրավված կողմերի մասին տեղեկությունը պետք է դարձնել հասարակությանը մատչելի և բացահայտ ազդակիր համայնքներում:

Ենթակառուցվածքների վերականգնման ծրագրով պայմանավորված դրական սոցիալ տնտեսական ազդեցությունները շատ ավելին են, քան անբարենպաստ ազդեցությունները, քանի որ բնակչության և զբաղվածության վրա ունեցած ազդեցությունը հիմնականում դրական է: Ենթակառուցվածքների վերականգնումը որոշակի ազդեցություն կթողնի այն վայրերի աշխատուժի ժողովրդագրական կառուցվածքի վրա, որտեղ կատարվում են ծրագրով նախատեսված բարելավումները: Այն հնարավորություն կստեղծի երիտասարդների համար մնալ ծրագրի իրականացման տարածքում և ներգրավվել իրականացվելիք աշխատանքներում: Վերականգնված

ճանապարհը կնպաստի զբոսաշրջության և որոշ դեպքերում տեղական արդյունաբերության զարգացմանը: Բացի այդ բարելավված ենթակառուցվածքները նոր աշխատանքի հնարավորություն կստեղծեն:

Տնտեսական զարգացումը կնպաստի ձեռք բերել ավելի շատ ներդրումներ հասարակական նշանակության, էներգետիկայի, կրթական, հանրային առողջության, մշակութային և ժամանցային հաստատություններում և այլն:

#### ***5.1.8. Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների պահպանություն***

Շինարարական աշխատանքների ընթացքում ոչ մի լուրջ վտանգ չի սպավում քանի դեռ կիրավում են շինարարական աշխատանքների անվտանգության ընթացակարգերը: Շինարարական հրապարակները պետք է հստակ ուրվագծված և սահմանափակված լինեն: Շինարարական հրապարակներ, և աշխատանքային տեղամասեր մուտքը պետք է խստորեն հսկվի և սահմանափակվի լիազորված անձանց կողմից:

Անհատական պաշտպանիչ միջոցները պետք է հասանելի լինեն և կիրառվեն աշխատանքների իրականացման ժամանակ: Բոլոր աշխատողները, մինչ շինարարական աշխատանքներում ներգրավվելը պետք է անցնեն համապատասխան դասընթացներ և հրահանգավորվեն (ներառյալ առաջին բուժօգնության դասընթացներ):

Պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները: Ապահովվելու է աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս, աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղերով, աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ:

Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ:

Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:

#### ***5.1.9. Արտակարգ իրավիճակների արագ հակազդման պլան***

Արտակարգ և վթարային իրավիճակները նվազեցնելու, ինչպես նաև բնական աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ արագ հակազդման



միջոցառումների իրականացման համար նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների և արտակարգ իրավիճակների: Հրահանգավորումը պետք է իրականացնի շինարարական աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին օգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյունների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:

## 5.2. Շահագործման փուլ

Շահագործման ընթացքում՝ երթևեկության հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով է պետք է լավագույնս իրականացվեն մեքենաների և ենթակառուցվածքների սպասարկման ծառայությունները:

Վերականգնված ճանապարհի և հարակից ենթակառուցվածքների պատշաճ շահագործումն ու սպասարկումը թույլ կտա նվազեցնել անվտանգության ռիսկերը: Ճանապարհային նշանները, գծանշումները և անվտանգության տարրերը պետք է պարբերաբար ստուգվեն և պահվեն համապատասխան աշխատանքային պայմաններում:

Պետք է ապահովվի արտակարգ իրավիճակներում արձագանքման պատրաստվածության կարգը, որպեսզի ժամանակին և համարժեք արձագանք տրվի այն քաղաքացիներին, մեքենաներին և հանրությանը, որոնք ճանապարհի վրա կհայտնվեն արտակարգ իրավիճակներում:

Աղբի հավաքման տարողություններ պետք է տեղադրվեն յուրաքանչյուր փողոցի տարածքներում հավաքելու համար ճանապարհը օգտագործողների կողմից նետված աղբերը:

Պետք է իրականացվի ենթակառուցվածքների և այլ կոմունիկացիաների պատշաճ սպասարկում, ներառյալ պարբերաբար ստուգումներն ու ըստ անհրաժեշտության վերանորոգման աշխատանքների իրականացումը:

**Աղյուսակ 6. Բնապահպանական և սոցիալական (միջոցառումների ծրագիր) կառավարման պլան**

Հնարավոր բացասական ազդեցություններ	Բնապահպանական և սոցիալական մեղմացման կամ մոնիտորինգի միջոցառումներ	Իրականացնող կազմակերպություն	Վերահսկող կազմակերպություն
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱ ՓՈՒԼ</b>			
<b>Օդային ավազանի աղտոտում</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական հրապարակներում և մոտեցնող ճանապարհներին փոշու ազդեցությունը կանխարգելելու նպատակով տարածքների պարբերաբար ջրցանում:</li> <li>• Շինարարական հրապարակներից փոշու աղդեցությունը նվազեցնելու համար շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) և թափոնների տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:</li> <li>• Օդի որակի պահպանության նպատակով նախատեսվում է իրականացնել նաև նյութերի պահեստավորումը հատուկ առանձնացված տարածքներում,</li> <li>• Շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաների տեղաշարժը իրականացնել հաստատված երթուղիներով և ժամանակացույցով:</li> <li>• Համայնքային երկհարկանի շինության վերակառուցման տարածքի առանձնացում ցանցապարիսպով</li> </ul>	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող ՀՏՁՀ
<b>Աղմուկի և թոթոման ազդեցություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ;</li> </ul>	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող ՀՏՁՀ

	<ul style="list-style-type: none"> <li>• Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:</li> <li>• Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</li> <li>• Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը</li> </ul>		
<p><b><i>Ջրօգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցություններ</i></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինհրապարակների փոշենստեցման համար ջրցանը իրականացնել ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,</li> <li>• Տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման ջրերը հավաքել հատուկ տարողության մեջ և վերօգտագործվել շինարարական տարածքների ջրցանման համար,</li> <li>• Անձրևաջրերը հեռացնել տարածքից գոյություն ունեցող սելավատարներով,</li> <li>• Ջրցանման համար օգտագործել միայն տեխնիկական որակի ջուր և տարողությունում հավաքված/ կուտակված ջուրը,</li> <li>• Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացնել մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու,</li> <li>• Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացնել համապատասխան մասնագիտացված կետերում:</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող ՀՏՁՀ</p>
<p><b><i>Թափոններ</i></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ պահել թափոնների կուտակումներից,</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող ՀՏՁՀ</p>

	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական հրապարակում առանձնացնել շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրերը,</li> <li>• Շինարարական թափոնները հնարավորինս առանձնացնել (մետաղները, փայտերը և այն ամենը ինչը հնարավոր կլինի վերաօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում) և մնացած մասը տեղափոխել հատկացված վայր,</li> <li>• Շինարարության ընթացքում կենցաղային աղբը հավաքել համայնքային աղբահավաք տարողությունների մեջ,</li> <li>• Բացառել կենցաղային աղբի այրումը,</li> <li>• Շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր իրականացնել փակ ծածկ ունեցող բեռնատարներով,</li> <li>• Շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխման համար տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ համաձայնություն:</li> <li>• Բացառել աղբի նախնական կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,</li> <li>• Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:</li> </ul>		
<p><b><i>Մշակութային ժառանգություն վրա ազդեցություններ</i></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Մշակել շինարարական աշխատանքների ընթացքում տարածքում առկա ֆիզիկական մշակութային ռեսուրսների պահպանության պլան,</li> <li>• Աշխատանքների կատարման ընթացքում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող ՀՏԶ</p>

	<p>մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքները շարունակել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից համապատասխան հրահանգավորումներ ստանալուց հետո:</li> <li>• Շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց համար համապատասխան դասընթացների և հրահանգավորման կազմակերպում;</li> <li>• Համապատասխան ցուցանակների ու պաստառների տեղադրում,</li> </ul>		
<p><b>Սոցիալական ազդեցություններ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Բնակչությանը համապատասխան տեղեկատվություն տրամադրում (այդ թվում, շինարարական աշխատանքների գտնվելու վայրը և տևողությունը) իրականացվող աշխատանքների վերաբերյալ:</li> <li>• Շինարարական աշխատանքների մեկնարկի, տրանսպորտային միջոցների շարժման սահմանափակման, այլընտրանքային մոտեցման և շրջանցման կազմակերպման մասին նախօրոք ծանուցել բնակչությանը:</li> <li>• Ունենալ բողոքների լուծման հաստատված մեխանիզմ համաձայն Համաշխարհային Բանկի ընթացակարգերի, որը թույլ կտա բնակչությանը/համայնքին բարձրացնել իրենց մտահոգությունները և ստանալ հետադարձ կապ:</li> <li>• Բողոքարկման վերանայման քայլերի և փոխհատուցման ընթացակարգի մասին, ինչպես</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող ՀՏԶՀ</p>

	<p>նաև բողոքարկման բանաձևում ներգրավված կողմերի մասին տեղեկությունը դարձնել հասարակության համար մատչելի:</p>		
<p><b><i>Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների պահպանություն</i></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ուրվագծել և սահմանափակել բոլոր շինարարական հրապարակները:</li> <li>• Շինարարական հրապարակներ, և աշխատանքային տեղամասեր մուտքը պետք է խստորեն հսկվի և սահմանափակվի լիազորված անձանց կողմից:</li> <li>• Անհատական պաշտպանիչ միջոցները պետք է հասանելի լինեն և կիրառվեն աշխատանքների իրականացման ժամանակ:</li> <li>• Բոլոր աշխատողները, մինչ շինարարական աշխատանքներում ներգրավվելը պետք է անցնեն համապատասխան դասընթացներ և հրահանգավորվեն (ներառյալ առաջին բուժօգնության դասընթացներ):</li> <li>• Պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,</li> <li>• Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները:</li> <li>• Ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս,</li> <li>• Աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղերով,</li> <li>• Աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ:</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող ՀՏՁՀ</p>

	<ul style="list-style-type: none"> <li>• Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ:</li> <li>• Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան</li> </ul>		
<p><b>Արտակարգ իրավիճակներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Մինչ շինարարական աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, պետք է անցնեն հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների և արտակարգ իրավիճակների: Հրահանգավորումը պետք է իրականացնի շինարարական աշխատանքների ղեկավարը:</li> <li>• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները պետք է հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:</li> <li>• Շինարարական աշխատանքների ժամանակ՝ մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող ՀՏԶ</p>



	<p>միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,</li> <li>• Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</li> <li>• Հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հրապարակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</li> <li>• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ:</li> <li>• Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին ցուցաբերել առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, տեղափոխել քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:</li> <li>• Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</li> </ul>		
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻԼ</b>			

<p><b>Կառուցվածքների և օբյեկտների ոչ պատշաճ վերահսկողություն և կառավարում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պահպանել ճանապարհի ենթակառուցվածքը, ապահովել տրանսպորտային միջոցների սահուն փոխադրումը,</li> <li>• Կոմունիկացիաների պատշաճ սպասարկումը կիրականացվի վերականգնված ենթակառուցվածքների շահագործման ընթացքում, այդ թվում, կանոնավոր ստուգումներ և վերանորոգում, անհրաժեշտության դեպքում:</li> <li>• Ճանապարհային նշանների, նշագծումների և անվտանգության տարրերի պարբերաբար ստուգումների իրականացում:</li> <li>• Ճանապարհին առկա աղբի ամենօրյա ռեժիմով հավաքում</li> </ul>	<p>Շահագործման և սպասարկման համար պատասխանատու գործակալություններ</p>	<p>Մարզային և համայնքային իշխանություններ</p>
---	---	---	---


## 6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Ներկայացվող գործունեությունն ուղղված է ՀՀ Սյունիքի մարզի պատմամշակութային արժեքների վերականգնմանն ու պահպանմանը, որի արդյունքում կբարելավվի ՀՀ Սյունիքի մարզի համար կարևոր պատմամշակութային տարածք, ինչպես նաև համապատասխան ճանապարհային ցանցն ու ինժեներական ենթակառուցվածքը՝ ապահովելով տեղի բնակիչների և զբոսաշրջիկների այցերի համար տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների և զբոսաշրջային օբյեկտների (հյուրատներ, ռեստորաններ և այլն) առավել հեշտ հասնելիություն:
2. Ենթաձրագրի իրականացումը կնպաստի զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացմանը: Նախատեսվող գործունեության իրականացման շահառուներն են ՀՀ Սյունիքի մարզի բնակիչները, ՏԻՄ-երը, ձեռնարկությունները և զբոսաշրջիկները:
3. Վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը:
4. Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման առումով:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում մշակութային կամ հնագիտական ժառանգության որևէ միավոր գտնելու դեպքում պետք է դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել ԿԳՄՄՆ: Շինարարական աշխատանքները չեն կարող վերսկսվել մինչև պատահական գտածոն չհետազոտվի հնագետի կողմից և ԿԳՄՄՆ-ի կողմից չտրվի գրավոր թույլտվություն:
6. Փորձաքննության հիմնական փուլի համար կհաշվարկվեն նաև բնապահպանական և սոցիալական միջոցառումների համար անհրաժեշտ գումարները, որոնք կներառվեն ընդհանուր նախահաշվի մեջ:


## 7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- [www.arlis.am](http://www.arlis.am)
- [www.atdf.am](http://www.atdf.am)
- [www.meghri.am](http://www.meghri.am)
- [www.syunik.mtad.am](http://www.syunik.mtad.am)
- [www.mnp.am](http://www.mnp.am)
- ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաներիՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
- СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
- СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
- Marzes of the Republic of Armenia and Yerevan city in figures, 2021, <https://www.armstat.am/en/?nid=82&id=2435>

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՐԱԴԻՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ











**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի օտարման ոչ ենթակա պատմության և մշակութային հուշարձանների ցանկ**

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն <sup>2</sup>
1	2	3	4	5	6	7	8
1			ԱՂԲՅՈՒՐ	19 դ. 2-րդ կես	Մեծ թաղում, Փարամազի փող.	S	1.1
2			ԱՄՐՈՑ ՄԵՂՐԻ (ՄԵՂՐՈՒ ԲԵՐԴ)	10 դ. վերջ-11 դ. սկիզբ	Մեծ թաղի հս կողմում	<	1.2
	2.1		Աշտարակ	18 դ.	Մեծ թաղի հս-աե կողմում	<	1.2.1
	2.2		Աշտարակ	18 դ.	Մեծ թաղի հս-աե կողմում	<	1.2.2
	2.3		Աշտարակ	18 դ.	Մեծ թաղի ամ կողմում	<	1.2.3
	2.4		Աշտարակ	18 դ.	Մեծ թաղի հս-ամ կողմում	<	1.2.4
	2.5		Աշտարակ	18 դ.	Մեծ թաղի ամ կողմում	<	1.2.5
	2.6		Աշտարակ	18 դ.	Մեծ թաղի հս-ամ կողմում	<	1.2.6

<sup>2</sup> Սույն ցուցակի ծանոթագրության սյունակում (թիվ 8) տրվում են 4-րդ սյունակում ներկայացված հուշարձանների և ենթահուշարձանների համարները պետական ցուցակի (կրճատ՝ պետ. ցուցակ) համաձայն: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև լրացուցիչ տեղեկատվություն հուշարձանի առանձին հատկանիշների (տեղ, վիճակ, բնութագրական օբյեկտների առկայություն և այլն) վերաբերյալ: Ցուցակը օտարման ոչ ենթակա այլ ենթահուշարձանների (խաչքար, տապանքար և այլն) անվանումներով չծանրաբեռնելու նպատակով ծանոթագրության մեջ ներկայացվում են նաև դրանց քանակական տվյալները և պետական ցուցակի ենթահամարները:

3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	18-20 դդ.	Մեծ թաղի աե եզրին, գոմերի մոտ գտնվող եկեղեցուց 200 մ հս-աե	S	գործող (1.23)
4			ԽԱՉՔԱՐ	1624 թ.	Փոքր թաղում, հենած է Մեծլումյան փող. 19 տան պատին	<	2.12.1
5			ԵԿԵՂԵՑԻ	17-18 դդ.	քաղաքի հս-աե եզրին, Փոքր թաղում, գոմերի մոտ	<	3: Ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (3.1)
6			ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ ՆԱԽԿԻՆ ՎԱՆՔ և ԿԱԼԵՐ ԳՅՈՒՂԵՐԻ				5
	6.1		Գերեզմանոց	10-18 դդ.	նախկին Վանք գյուղի հս-աե մասում	<	5.1: Ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (5.1.1)
	6.2		Գերեզմանոց	13-17 դդ.	նախկին Վանք գյուղից 500 մ հս, լքված Կալեր գյուղ տանող ճանապարհից աջ, Կալեր գետակի ձախ ափին	<	5.2: Ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (5.2.1)  գործող (5.3): Ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (5.3.1)
	6.3		Գերեզմանոց	17-20 դդ.	նախին Վանք գյուղից մոտ 4 կմ հսաե, լքված Կալեր գյուղի հս եզրին	<	
	6.4		Գյուղատեղի «Նուշանց»	16-20 դդ.	նախկին Վանք գյուղից մոտ 4 կմ հս-աե, լքված Կալեր գյուղի հս մասում՝ «Նուշանց ձոր»-ում	<	5.4

	<b>6.4.1</b>	Գերեզմանոց	16-20 դդ.	«Նուշանց ծոր»-ի աջ կողմում, եկեղեցուց հս	<	5.4.1
	<b>6.4.2</b>	Եկեղեցի	17 դ.	գյուղատեղիի հս մասում	<	5.4.3
	<b>6.4.3</b>	Խաչքար	9 դ.	լքված Կալեր գյուղից մոտ 600 մ հս-ամ, «Նուշանց ծոր»-ի ձախ կողմում, դաշտի մեջ	<	5.4.4
<b>6.5</b>		Կամուրջ	17 դ.	նախկին Վանք գյուղից մոտ 500 մ հս-աե, Կալեր գետակի վրա	<	5.7
<b>6.6</b>		Կամուրջ	17դ.	նախկին Վանք գյուղից 2 կմ հվ-ամ, գյուղ տանող ճանապարհի սկզբնամասում	<	5.8
<b>6.7</b>		Կամուրջ	19-20 դդ.	նախկին Վանք գյուղից 2 կմ հվ-ամ, գյուղ տանող ճանապարհի սկզբնամասում, նախորդից մոտ 20 մ հվ	<	5.9
<b>6.8</b>		Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	նախկին Վանք գյուղից մոտ 4 կմ հս-աե, Լքված Կալեր գյուղի հս-ամ եզրին	S	5.10
<b>6.9</b>		Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1982 թ.	նախկին Վանք գյուղի կենտրոնում, եկեղեցուց մոտ 15 մ ամ	S	5.11

**ՀԱՎԵԼՎԱԾ 3. Մեղրի քաղաքի Փոքր Թաղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ**

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)			Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը, հանրապետական / տեղական	Ծանոթագրություն
	1	2	3					
2				<b>ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ ՓՈՔՐ ԹԱՂ</b>		<b>Մեղրագետի աջափնյա լանջին</b>	<b>&lt;</b>	
	2.1			Բնակելի տուն	1880 թ.	Փոքր թաղում	S	Ա. Ծովյանի տունը, երկհարկ
	2.2			Բնակելի տուն	1895 թ.	Փոքր թաղում, հին հիվանդանոցի մոտ	S	«Շահուց տներ», երկհարկ
	2.3			Բնակելի տուն	19 դ. կես	Փոքր թաղի վերին փողոցում	S	Ա. Ավետիսյանի տունը, երկհարկ
	2.4			Բնակելի տուն	19 դ. վերջ	Փոքր թաղում	S	Վ. Սիմոնյանի տունը, երկհարկ
	2.5			Բնակելի տուն	1891 թ.	Մեծլույան փող. 4	S	միահարկ է, նկուղով, նախապես՝ բնակելի տուն, հետագայում՝ հիվանդանոց, այժմ՝ բնակելի տուն
	2.6			Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Մեծլույան փող. 7	S	Լ. Խաչատրյանի տունը, միահարկ
	2.7			Բնակելի տուն	19 դ. 2-րդ կես	Մեծլույան փող. 12	S	Ս. Շահբազյանի տունը, երկհարկ
	2.8			Բնակելի տուն	1896 թ.	Մեծլույան փող. 14	S	Հարությունյանների տունը, երկհարկ
	2.9			Բնակելի տուն	1870-ական թթ.	Մեծլույան փող. 15, եկեղեցուց հս-ատ	S	Առաքելյանների տունը
	2.10			Բնակելի տուն	19 դ. վերջ	Մեծլույան փող. 16	S	Կ. Փարսաղանյանի տունը, միահարկ

	2.11			Բնակելի տուն	19 դ. վերջ	Մեծլումյան փող. 18	S	միահարկ է, նախկինում Ծովանների տունն էր, այժմ՝ Լ. Սարգսյանի
	2.12			Բնակելի տուն	19 դ. 2-րդ կես	Մեծլումյան փող. 19	S	Ա. Ղազարյանի տունը, տան մի կեսը երկհարկ է, մյուս կեսը՝ եռահարկ
		2.12.1		Խաչքար	1624 թ.	հենած է տան պատին	<	տեղափոխել են Փոքր թաղի եկեղեցուց
	2.13			Բնակելի տուն	19 դ. սկիզբ	Մեծլումյան փող. 22	<	Կարապետ Մեծլումյանի (նրա անվամբ կոչել են փողոցը և քաղաքային հիվանդանոցը) տունը, երկհարկ
	2.14			Բնակելի տուն	19 դ. վերջ	Մեծլումյան փող. 22 ա	S	տեղի Խաչատուրի տունը, եռահարկ է, կիսավեր
	2.15			Բնակելի տուն	19 դ. վերջ-1920-ական թթ.	Մեծլումյան փող. 22 բ	S	Վ. Մարտիրոսյանի տունը, երկհարկ
	2.16			Բնակելի տուն	1866 թ.	Մեծլումյան փող. 24	S	կառուցել է Մ. Մկրտումյանը, երկհարկ
	2.17			Բնակելի տուն	19 դ. վերջ	Մեծլումյան փող. 26	S	Խ. Համբարձումյանի տունը, միահարկ
	2.18			Բնակելի տուն	19 դ. վերջ	Մեծլումյան փող. 28	S	Ստեփանյանների տունը, միահարկ
	2.19			Բնակելի տուն	19 դ. վերջ	Մեծլումյան փող. 30	S	Խաչինց ազգի տներից է, երկհարկ
	2.20			Եկեղեցի Սբ. Սարգիս	17 դ.	Փոքր թաղում	<	եռանավ բազիլիկ՝ 17 դ. որմնանկարներով
		2.20.1		Գավիթ - սրահ	17 դ. վերջ	եկեղեցու հվ կողմում	<	պահպանվել են հիմքերը
		2.20.2		Խաչքար	17 դ.	ազուցված է եկեղեցու մուտքի աջակողմում	<	ստորին աջ անկյունը կտրված է
		2.20.3		Խաչքար	17 դ.	եկեղեցու հվ պատի մոտ	<	երկատված է, արձանագիր չարդդտված է
		2.20.4		Խաչքար	17 դ.	եկեղեցու հվ պատի մոտ	<	
		2.20.5		Խաչքար Հանեսի	17 դ.	եկեղեցու բակում	<	
		2.20.6		Շինություն՝ տնտեսական	17 դ. վերջ	եկեղեցու հվ-ամ անկյան մոտ	<	ծածկը քանդված է
		2.20.7		Պարիսպ	17-18 դդ.	եկեղեցու հվ կողմում	<	կիսավեր է

**ՀԱՎԵԼՎԱԾ 4. Շինարարական հրապարակի կազմակերպման հաստակագիծ**

